



Henry Ford Health System-ը (HFHS) ամեն հիվանդի վերաբերվում է արժանապատվությանը, հարգանքով և կարեկցանքով: Հիվանդները կարող են HFHS-ին դիմել նրա մատուցած ծառայությունների դիմաց արդար գնագոյացման համար, ինչպես նաև հիվանդներին ցուցաբերած օժանդակության համար՝ օգնելու գտնել տարբերակներ՝ իրենց բժշկական ծախսերը կառավարելու համար:

Ձեր բժշկական վճարմամբ Դուք կարող եք իրավունք ունենալ օգնություն ստանալ Patient Financial Assistance Program-ի (Հիվանդի ֆինանսական օժանդակության ծրագրի, PFAP) միջոցով:

Ինչպե՞ս եմ որակավորվում PFAP-ի համար:

Դուք պետք է համապատասխանեք որոշակի պահանջների՝ PFAP-ին իրավասու լինելու համար: Սրանք ներկայացված են ստորև աղյուսակում:

Որակավորման չափորոշիչներ	Մեթոդ 1	Մեթոդ 2a	Մեթոդ 2b
ԱՄՆ քաղաքացի կամ օրինական բնակիչ	X	X	X
Բնակություն Մակոմբում, Օուկլենդում կամ Ուեյն վարչական շրջանում	X	X	X
HFHS-ում HFHS մատակարարողի կողմից ախտորոշված	X	X	X
Չորակավորված՝ առողջապահական ապահովագրության համար	X		
Աղքատության դաշնային մակարդակի 250%-ից ցածր եկամուտ	X	X	
Սահմանափակ ֆինանսական աղբյուրներով ապահովագրված		X	X
Տնային տնտեսության եկամտի 30%-ից ավելի HFHS բժշկական վճարման կտրոններ		X	X

** Մենք կարող ենք հիվանդների իրավասությունը հետընթաց կարգով գնահատել՝ վերևում չնշված չափորոշիչների հիման վրա:*

Եթե Դուք համապատասխանում եք Մեթոդ 1 կամ 2a-ի չափորոշիչներին, ապա՝ կարող եք բժշկական ծառայությունների որակավորման համար 100% զեղչ ստանալ:

Եթե Դուք համապատասխանում եք Մեթոդ 2բ-ի չափորոշիչներին, Ձեր որակավորվող բժշկական պարտքը կարող է նվազեցվել մինչև Ձեր տնային տնտեսության 30%-ը:

Եթե Դուք չեք համապատասխանում այս մեթոդներից որևէ մեկի չափորոշիչներին, ապա Ձեզանից կգանձվի ոչ ավելի, քան սովորաբար վճարում են առողջապահական ապահովագրության ծածկույթ ունեցող հիվանդները:

Ինչպե՞ս դիմել PFAP-ի համար:

PFAP-ի դիմելու համար Դուք պետք է լրացնել Հիվանդի ֆինանսական օժանդակության ծրագրի հայտաձևը և աջակցող փաստաթղթեր տրամադրել: Դիմելու համար Դուք ունեք մինչև 240 օր՝ Ձեր առաջին հաշիվը ստանալու օրվանից սկսած: HFHS-ի կողմից Ձեր դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում գրավոր ձևով Ձեր կտրամադրվի որոշումը:

Ինչպե՞ս ավելին իմանալ:

Ավելի մանրամասն տեղեկությունների կամ մեր ամբողջական քաղաքականությունը և/կամ հայտաձև ձեռք բերելու համար խնդրում ենք՝

- Այցելել մեր վեբկայք www.henryford.com/financialassistance
- Ջրուցել մեր գրանցման աշխատակազմի կամ անձամբ ֆինանսական հարցերով խորհրդատուների հետ կամ զանգահարել՝
 - Henry Ford Hospital և բժշկական կենտրոններ (ներառյալ՝ Cottage Medical Center)՝ (313) 916-4510
 - Henry Ford Wyandotte Hospital կամ Brownstown Medical Center՝ (734) 246-9516
 - Henry Ford West Bloomfield Hospital՝ (248) 325-0201
 - Henry Ford Macomb Hospitals (Clinton Township և Mount Clemens): (586) 263-2696
 - Henry Ford Kingswood Hospital և Maplegrove Center՝ (313) 874-9501